ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № HC1 – GBA1– 10/17

ք. Երևան «25» Հոկտեմբերի 2017թ.

«ՎԵԲ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, հետագայում՝ Կատարող, ի դեմս տնօրեն Ա.Տոնեյանի և **Գյուղատնտեսության Զարգացման Հիմնադրամ** ,ի դեմս գործադիր տնօրեն՝ Գեղամ Գևորգյանի հետագայում՝ Բաժանորդ (հետագայում՝ Կողմեր), կնքում են սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկա

Կատարողը մատուցում է տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություններ: Ծառայությունների ցանկը նշված է սույն Պայմանագրին կից հավելվածներում:

2. Կողմերի պարտավորությունները

2.1. Կատարողը պարտավորվում է.

2.1.1. ապահովել տվյալների հաղորդման և ինտերնետ հասա նելիության ծառայություններ՝ տեխնիկական պայմանների առկայության դեպքերում,

2.1.2. տրամադրել մեկ IP հասցե,

2.1.3. կատարել ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ գրանցումները պայմանագրի գործողության ողջ ժամկետում,

2.1.4. իրականացնել տրամադրվող կապի շուրջօրյա վերահսկում և կառավարում, հնարավորության դեպքում նախապես տեղեկացնել Բաժանորդին պրոֆիլակտիկ աշխատանքների կամ այլ պարագաների մասին, որոնք կարող են ժամանակավորապես ընդհատել ծառայությունների մատուցումը,

2.1.5. անհրաժեշտության դեպքում իրականացնել կապը ապահովող սարքավորումների տեղադրման և կարգավորման աշխատանքներ,

2.1.6. Բաժանորդին ընձեռնել հնարավորություն Կատարողի էլեկտրոնային կայքից տեղեկություն ստանալ իր տրաֆիկի ծավալների վերաբերյալ, ինչի համար Բաժանորդին հատկացնել համապատասխան մուտքային անուն և ծածկագիր,

2.1.7. Բաժանորդի պահանջով տրամադրել վերջինիս օգտագործած տրաֆիկի ծավալների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն:

2.2. Բաժանորդը պարտավորվում է.

2.2.1 հետևել իր օգտագործած տրաֆիկի ծավալներին կետ 2.1.6-ով նախատեսված կայք էջից, ստանալ տեղեկատվություն կանխավճարի մնացորդի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկատվություն ծառայության տիպի, արագությունների և այլնի վերաբերյալ, ինչի գծով անհամաձայնություն ունենալու դեպքում անհապաղ տեղեկացնել Կատարողին, ժամանակին վավերացնել պայմանագրով և հավելվածներով նախատեսված և իրեն ներկայացված փաստաթղթերը և կատարել բոլոր վճարումները,

2.2.2 սույն Պայմանագրի շրջանակներում նախատեսված աշխատանքների իրականացման և ծառայությունների մատուցման նպատակով ապահովել Կատարողի աշխատակիցների մուտքը Բաժանորդի տարածք, ինչպես նաև ստեղծել անհրաժեշտ պայմաններ Բաժանորդի տարածքում տեղադրված և կապ ապահովող սարքավորումների կարգավորման համար,

2.2.3 պահպանել համակարգչային ցանցերում գործող ընդհանուր օրինակարգը,

2.2.4 առանց Կատարողի հետ համաձայնեցման չկատարել փոփոխություններ կապի համար տեղադրված սարքավորումների և ծրագրային ապահովման հետ,

2.2.5 բացառել կամ հնարավորինս նվազեցնել իր կողմից կապի անհարկի ծանրաբեռնելու դեպքերը (օրինակ՝ ցանցային կամ համակարգչային վարակիչների տարածում, էլեկտրոնային նամակներով հեղեղում (spaming) և այլն): Հակառակ դեպքում, ինչպես նաև Բաժանորդի կողմից հակերային գործողությունների (մասնավորապես՝ վնասաբեր ծրագրերի տարածում, չարտոնված մուտքի կամ այն իրականացնելու փորձի արձանագրում) հայտնաբերման դեպքում, որը կարող է վնաս հասցնել Կատարողին կամ երրորդ անձին, Կատարողն իրավունք ունի առանց նախազգուշացնելու միակողմանի ձեռնարկել համապատասխան հակազդող բնույթի միջոցառումներ (օրինակ՝ տրաֆիկի որոշ տիպերի թողանցման սահմանափակում), ընդհուպ մինչև Բաժանորդի կապի անջատում: Ծառայությունների լիարժեք վերսկսումը իրականացվում է միայն Բաժանորդի կողմից սույն կետով նախատեսված պարտավորությունները կատարելուց հետո,

2.2.6 տվյալ օրվա տրաֆիկի ծավալի վերաբերյալ իր անհամաձայնությունը հայտնել Կատարողին այդ օրվա ավարտից սկսած երեք աշխատանքային օրվա ընթացքում, որից հետո կողմերը իրենց տրամադրության տակ գտնվող տվյալների հիման վրա փորձում են ողջամիտ ժամկետներում գալ ընդհանուր եզրակացության: Եթե Բաժանորդն իր անհամաձայնությունը հայտնում է նշված